Ներածություն

Կրտսեր դպրոցը կրթության այն հիմնաքարն է, որի որակից է կախված երեխայի հետագա ուսուցումը: Սա տարրական դպրոցի ուսուցչի համար հատուկ պատասխանատվություն է ս ահմանում: Նրա խնդիրն է ոչ միայն կարդալ ու գրել սովորեցնել, այլ նաև երեխայի հոգևոր հիմքը հաստատել, բացահայտել նրա լավագույն որակները, ուսումնական գործունեության ուղիները ցույց տալ:

Ժամանակակից պայմաններում չի կարելի ուսուցումը մեկնաբանել որպես սովորողների մեջ միայն գիտելիքների, կարողությունների և հմտությունների որոշակի համակարգի ձևավորում: Այժմ խնդիր է դրվում ուսուցումը կազմակերպել այնպես, որ այն առավելագույն չափով ապահովի դպրոցականների մտավոր զարգացումը: Դրա համար էլ սովորաբար խոսում են ոչ թե պարզապես ուսուցման, այլ զարգացնող ուսուցման մասին: Զարգացումը դառնում է մանկավարժական գործնթացի գլխավոր բառը, որպես «սովորել» հասկացության այլընտրանք:

Ուսուցման շարժառիթների ձևավորումը

Տեղեկատվական տեխնոլոգիաների հասարակությունը կամ ինչպես անվանում են՝ հետարդյունաբերական հասարակությունը, ի տարբերություն 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի կեսերի արդյունաբերական հասարակության, շատ ավելի շահագրգռված է, որ իր քաղաքացիները կարողանան ինքնուրույն, ակտիվ գործել, կայացնել որոշումներ, ճկուն կերպով հարմարվել կյանքի պայմաններին: Այստեղից՝ արդի տեղեկատվական հասարակությունը բոլոր ուսումնական հաստատությունների և հատկապես դպրոցների առաջ դնում է հետևյալ խնդիրները՝ պատրաստել շրջանավարտներ, որոնք ունակ են.

-ճկուն կերպով հարմարվել կյանքի փոփոխվող իրավիճակներին,

-կարողանալ տեսնել կյանքի իրական պրոբլեմները և փնտրել դրանց լուծման արդյունավետ միջոցներ՝ օգտագործելով տեխնոլոգիաները: Հստակ գիտակցել, թե

իրենց ձեռք բերած գիտելիքները որտեղ և ինչպես կարող են օգտագործվել, ստեղծագործաբար մտածել և զարգացնել նոր գաղափարներ,

-ճիշտ աշխատել տեղեկատվության հետ՝ կարողանալով հավաքել տվյալ պրոբլեմի լուծման համար անհրաժեշտ փաստերը, վերլուծել, համադրել համանման կամ այլընտրանքային լուծման տարբերակները, հաստատել օերինաչափությունները, կատարել անհրաժեշտ ընդհանրացումներ, առաջարկել հանգուցալուծման հիպոթեզներ, անել հիմնավորված եզրահանգումներ, դրանք կիրառել նոր պրոբլեմների լուծման համար,

-ինքնուրույն ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, գործնականում հմտորեն դրանք կիրառել ի հայտ եկող տարբեր պրոբլեմների լուծման համար, որպեսզի հետագայում հնարավորություն ունենան գտնել իրենց տեղը կյանքում,

-լինել հաղորդակցվող, սոցալիական տարբեր խմբերի հետ առնչվող, կարողանալ համատեղ աշխատել տարբեր բնագավառներում, տարբեր իրադրություններում, կանխել կամ հ մտորեն դուրս գալ ց անկացած կոնֆլիկտային իրադրությունից,

-ինքնուրույն զարգացնել սեփական բարոյականությունը, ինտելեկտը և կուլտուրական մակարդակը:

Այսպիսին է ժամանակի թելադրանքը ցանկացած զարգացած հասարակության համար, որը, բնականաբար, կառուցողական պահանջներ է առաջադրում կրթական համակարգերին:

Իսկ ի՞նչ կոնկրետ քայլեր պետք է անեն դպրոցականների կրթման հիմնական պատասխանատուները՝ ուսուցիչները:

Փորձենք վերը նշված պահանջներից մի քանիսի համար բերել որոշ ընդհանուր լուծումներ:

Ցանկացած ուսումնական ծրագիր դատապարտված է անհաջողության, եթե այն կիրառելիս ուսուցիչը չի օգտագոտծում այնպիսի հոգեբանական միջոցներ, որոնք խթանեն աշակերտի մեջ ուսման հանդեպ հետաքրքրության առաջացման պրոցեսը:

Հետաքրքրությունը, որպես շարժառիթ, չափազանց մեծ դեր է կատարում ուսուցման մեջ: Այն ձևավորվում է ուսուցման պրոցեսում և միաժամանակ յուրաքանչյուր ուսուցչի համար ամենագործուն միջոցներից մեկն է՝ գիտելիքների որակը բարձրացնելու և դպրոցականների մեջ ուսման նկատմամբ դրական վերաբերմունք դաստիարակելու հարցում:

Սովորողների մեջ հետաքրքրություն է ձևավորվում ոչ միայն ուսումնական նյութի կամ առանձին ուսումնական դիսցիպլինների բովանդակության, այլև գլխավորապես գիտելիքներ ձեռք բերելու բուն պրոցեսի հանդեպ: Դպրոցականներին պետք է հետաքրքիր լինի սովորելը՝ ուսումնասիրելն ու ինքնուրույն եզրակացություններ անելը, խնդիրներ վճռելն ու վճռելու ընդհանուր եղանակներին տիրապետելը, լաբորատոր աշխատանքներ կատարելը, վերլուծելը, ինչպես նաև այդ աշխատանքից ստացված փաստերի արդյունքներն ընդհանրացնելը:

Հաճախ ընտանիքում ու դպրոցում աշակերտի մեջ ուսման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար բարոյախոսում են կրթության, մասնագիտության հասարակական, սոցիալական ու անձնական նշանակության մասին: Թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ այդպիսի զրույցներն իրենց չեն արդարացնում, որովհետև բարոյախոսությամբ աշակերտի մեջ չի ստեղծվում համոզմունք և սոցիալական այնպիսի բարձր գիտակցություն ու պատասխանատվություն, որոնք աշակերտի գործունեության համար դառնան դրդապատճառ ու նրան մղեն հաղթահարելու երկարամյա ուսումնառության ամենօրյա դժվարությունները:

Աշակերտի անձնական հետաքրքրությունը ուսման նկատմամբ բարձրացնում է ուսման որակը: Երբ բացակայում է հետաքրքրությունը, աշակերտի ուսումնական գործունեությունը դառնում է իմիջիայլոց և սոսկ պարտականություն, որը կարող է աշակերտների մոտ գիտելիքների պ աշար չստեղ ծել: Ո ւսուցման պ րոցեսը պետ ք է վերածվի հետաքրքրությունները բավարարելու միջոցի: Որպեսզի աշակերտի համար ուսուցման պրոցեսը հետաքրքիր լինի, նա պետք է հասկանա իր ստացած

գիտելիքների կիրառման բնագավառները, պատկերացնի դրանց գործնական կիրառումը իր ամենօրյա կյանքում: Այդ իսկ պատճառով պետք է օրինակների, փորձերի միջոցով պատկերացում ստեղծել երեխաների մոտ և դրանով իսկ հետաքրքրություն առաջացնել:

Հաջորդ շարժառիթը, որը խթանում է սովորողի ուսուցման գործընթացին, աշակերտների գիտելիքների ***գնահատումն*** է: Գնահատվելը, մտավոր ու ֆիզիկական կարողությունների արժեքավորումը մարդու համար հոգեբանորեն ծանր պրոցես է: Քննությունը, որի ընթացքում աշակերտը ցուցադրում է իր գիտելիքների ծավալը, տրամաբանելու կարողությունը, մտքի ճկունությունը և բարոյաինտելեկտուալ շատ հատկանիշներ (դրանով ստեղծելով որոշակի հասարակական կարծիք իր անձնային հատկանիշների մասին), մեծ փորձություն է աշակերտի համար: Իսկ գիտելիքների ամեն մի գնահատում ինչ-որ չափով քննություն է: Աշակերտի գիտելիքների գնահատումը ուսուցչի և աշակերտի փոխհարաբերությունների, նրանց փոխադարձ գործունեության ծայրահեղային պահերից մեկն է, որի ընթացքում փոխհարաբերություններն ինչ-որ չափով մերկանում են, դառնում ավելի նյութական ու ակնհայտ: Գնահատելիս ուսուցիչը ոչ միայն պետք է լինի օբյեկտիվ, այլև պետք է մնա աշակերտի բարեկամը, կիսի այն ապրումները, որ աշակերտի մեջ կարող է առաջացնել լավ կամ վատ գնահատականը: Այդ գնահատականը աշակերտի համար բովանդակություն, հետևաբար նաև նշանակություն չունի, քանի դեռ նրա մեջ ուսումնական գործունեության պրոցեսում չի ձևավորվել ինքնագնահատման կարողությունը:

Աշակերտների գիտելիքների գնահատման ճշգրիտ չափանիշների կիրառումը պահանջում է, որ գնահատելիս հաշվի առնվի ոչ այնքան էմպիրիկ փաստերի վերարտադրությունը, որը հիմնականում կախված է հիշողության առանձնահատկություններից, որքան երևույթների էությունը, դրանց քանակական ու որակական հատկանիշները, զարգացման ու փոփոխման օրինաչափություններն ու միտումներն ըմբռնելու կարողությունը, դրանց բացահայտման սկզբունքների

տիրապետումը, որոնք պայմանավորված են աշակերտի ինտելեկտուալ զարգացման մակարդակով: Այսինքն՝ այն, ինչը տեսությունը, գիտելիքը մարդու ձեռքին դարձնում է միջոց, զենք կյանքում, գործունեության պրոցեսում:

Խոսելով աշակերտների կողմից գիտելիքների ձեռքբերման մասին, Էյնշտեյնը գտնում էր, որ էմպիրիկ փաստերը ճնշում են մարդու ստեղծագործական միտքը: "Այդպիսի հարկադրանքը, - գրում է նա, - այնքան էր ինձ խրտնեցնում, որ վերջնական քննություններից հետո մի ամբողջ տարի գիտական ամեն տեսակ պրոբլեմ ինձ համար թունավորվում էր: Ըստ էության գրեթե հրաշք է, որ ուսուցման ժամանակակից մեթոդները դեռևս ամբողջովին չեն խեղդել սուրբ հետաքրքրասիրությունը, քանի որ այդ նուրբ բույսը պահանջում է խրախուսանքի հետ միասին նաև ազատություն, առանց որի այն կկործանվի: Մեծ սխալ է մտածել, թե պարտքի զգացումն ու հարկադրանքը կարող են նպաստել ուրախություն գտնելու այն բանում, որ կարող ենք դիտել ու որոնել: Ինձ թվում է , որ նույնիսկ առողջ գիշատիչ կենդանին կկորցներ ուտելու անզուսպ ցանկությունը, եթե հաջողվեր մտրակի օգնությամբ հարկադրել նրան անընդհատ ուտել, մանավանդ երբ սոված չէ և հատկապես, երբ առաջարկվող ուտելիքը նա չի ընտրել":

Գնահատման արդյունքում ցուցադրվում է աշակերտների գիտելիքների ծավալը, տրամաբանական կարողությունը, մտքի ճկունությունը, ստեղծվում է հասարակական կարծիք իր անձնական հատկանիշների մասին: Կանխավ յուրաքանչյուր աշակերտ ցանկանում է բարձր գնահատվել, սակայն ուսուցչի խնդիրն է գնահատել օբյեկտիվ, գնահատել ոչ թե մարդուն, այլ նրա ինտելեկտուալ զարգացման մակարդակը: Աշակերտը պետք է ընդունի գնահատականի օբյեկտիվությունը, ինչպես նաև ժամանակի հետ նրա մեջ պետք է ձևավորել ինքնագնահատման կարողությունը:

Ուսումնական գործընթացում աշակերտը (նաև ցանկացած անձ) հատկապես կարիք ունի խրախուսանքի, քաջալերանքի, դրական գնահատականի: Կրտսեր դպրոցականը երբեք չի հաշտվում բացասական գնահատականի հետ, այն նրան վշտացնում է: Ուսուցիչը պետք է շատ նրբորեն բացատրի ցածր գնահատականի

պատճառը և անպայման գտնի դրական, լավ հատկանիշներ երեխային քաջալերելու համար: Երբեք չի կարելի երեխային պատժել նրան ցածր գնահատելով: Եվ իմ կողմից չափազանց բարձր է գնահատվում այն, որ առաջին դասարանցին չի գնահատվում միավորային սանդղակով:

Հաջորդ շարժառիթը ***գովասանքը և խրախուսելն*** է:

Խրախուսել նշանակում է՝ դրականորեն գնահատել որևէ անհատի կամ կոլեկտիվի գործունեությունը: Կարելի է ասել՝ խրախուսանքը առանձին վերցրած աշակերտի կամ կոլեկտիվի վարքի ու գործունեության՝ հասարակայնորեն դրական գնահատման արտահայտությունն է:

Խրախուսանքը մեծ նշանակություն ունի անձի գործունեության և վարքի գնահատման համար: Այն հնարավորություն է ընձեռում ճանաչելու այն գործողության, այն արարքի իմաստն ու դրանց դրդապատճառները, որ կատարել է աշակերտը կամ կոլեկտիվը:

Չի կարելի խրախուսանքը շռայլել: Այս դեպքում ոչ մի նշանակություն չպետք է ունենան «սիրելի», «ոչ սիրելի» աշակերտները, այլ պետք է նկատի ունենալ կոլեկտիվի գործունեության համար կատարված գործի նշանակությունը:

Վատ է, երբ աշակերտն իր կատարած աշխատանքի համար սպասում է պարգևի, գովասանքի: Ընդառաջ գնալ նման աշակերտին, առնվազն կնշանակի նրա մեջ արմատավորել բնավորության վատ գիծ , վատ սովորույթ , որը կարող է նրան ուղեկցել ամբողջ կյանքում:

Որևէ աշակերտի խրախուսելուց առաջ կարելի է խորհրդակցել դասարանի կոլեկտիվի հետ, իմանալ դասարանական կոլեկտիվի կարծիքը խրախուսվողի նկատմամբ և ոչ թե սխալվել խրախուսանքի մեջ և հետո կանգնել անցանկալի փաստի առջև :

Խրախուսելիս պետք է հաշվի առնել աշակերտի անհատական առանձնահատկությունները. խառնվածքը, բնավորությունը, բարոյակամային հատկանիշները: Հարկավոր է մտածել՝ խրախուսվողը հո՞ չի գոռոզանա , հո՞ երես չի

առնի դրանից: Խորհուրդ է տրվում ավելի շատ խրախուսել այն աշակերտներին , ովքեր անհամարձակ են, անվստահ են իրենց ուժերի նկատմամբ, ինքնամփոփ են, քաշվող, ամոթխած և այլն: Խրախուսելիս պ ետք է օ բյեկտիվ լ ինել: Խրախուսանքը պետք է արժանանա կոլեկտիվի հավանությանը և վերածվի հասարակական կարծիքի:

Չի կարելի միշտ նույն աշակերտին խրախուսել:

Հոգեբաները հետաքրքիր գիտափորձ են անցկացրել:

Մի խումբ աշակերտներից յուրաքանչյուրն ուսուցչի ներկայությամբ ինքնուրույն կատարել է ուսումնական առաջադրանք: Մի քանիսին ուսուցիչը հաճախ մոտեցել, հետաքրքրվել է, թե ինչպես են առաջադրանքը կատարում, գովել, խրախուսել է: Մի քանիսին էլ մոտենալիս գլխավորապես նշել է նրանց թույլ տված սխալները, արել կտրուկ դիտողություններ, քննադատել, իսկ մի քանի հոգու նկատմամբ էլ եղել է անտարբեր, բոլորովին անուշադիր, նրանցից ոչ մեկին ոչ մի անգամ չի մոտեցել: Ստացվել են հետևյալ արդյունքները. առաջադրանքը ամենից լավ կատարել են նրանք, ում ուսուցիչը խրախուսել է, քաջալերել: Առաջադրանքը վատ են կատարել նրանք, ովքեր արժանացել են դիտողությունների, ում տրամադրությունը առաջադրանքը կատարելիս ուսուցիչը փչացրել է: Բոլորովին անսպասելին այն էր, որ ամենից ցածր արդյունքներ տվել են ոչ թե նրանք, ովքեր արժանացել են ուսուցչի դիտողություններին, այլ նրանք, ովքեր ուսուցչի կողմից մատնվել են անուշադրության, ովքեր ո՛չ քաջալերվել և ո՛չ էլ պարսավանքի են արժանացել:

Այս փորձը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ աշակերտը ուսումնական գործնթացում կարիք ունի խրախուսանքի և քաջալերանքի:

Ժամանակակից դպրոցում կիրառվում են խրախուսանքի տարբեր ձևեր: Այսպես օրինակ՝ դաստիարակի գովասանքը , բանավոր , գրավոր շնորհակալությունը, շնորհակալությունը դպրոցի մասշտաբով , գրենական պիտույքներով , դասագրքերով պարգևատրումը , պատվո տախտակին արժանացնելը և այլն:

Ուսումնական գործընթացի շարժառիթներից է համարվում ***խաղը***: Խաղին հատուկ կարևորություն է տրվում վաղ դպրոցական և նախադպրոցական տարիքի

երեխաների ուսուցման, դաստիրակության գործում, քանի որ, ըստ հոգեբանների, այդ տարիքն առանձնանում է որպես անհատականության ձևավորման առաջին աստիճան: Այդ տարիքում խաղն է անձի ձևավորման կարևորագույն միջոցը, գործոնը: Ուստի մանկավարժության մեջ մեծ կարևորություն է տրվում ուսուցման համակարգում խաղի դերին և ուսուցումը խաղի օգնությամբ կազմակերպելուն:

Փոքր ինչ մանրամասն անդրադառնանք խաղի ուսումնական նշանակությանը:

Ուսուցանող խաղերը, հետաքրքրաշարժ առաջադրանքները, սևեռում են երեխայի անկայուն ուշադրությունը դասի ընթացքին, տալիս են նոր գիտելիքներ, ստիպում են լարված մտածել: Խաղերը երեխաներից պահանջում են հնարամտություն, ուշադրություն, համատեղ ստեղծագործական համառություն, զարգացնում են երևակայությունը, արագորեն ճիշտ լուծումներ գտնելու կարողությունները: Կարևոր է նաև այս ամենի դաստիարակչական կողմը, քանի որ այդ ընթացքում երեխաները մոտիկից առնչվում են, մրցակցում, վիճում, իրար օգնում, դառնում են ինքնուրույն և ընկերասեր:

Խաղի ընթացքում մեծ տեղ պետք է հատկացնել հետաքրքրաշարժ խնդիրներին ու առաջադրանքներին, որոնց հիմնական նպատակը սովորածը կրկնելու, ամրապնդելու և կիրառելու կարողությունների ձևավորումն է: Բազմազան մանկավարժական, տրամաբանական, հետաքրքրաշարժ վարժությունները երեխաները կատարում են սիրով ու հափշտակությամբ: Նրանք ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ լուծում են, վճռում, գտնում, կազմում, հորինում, առանձնացնում և այլն: Իսկ այդ ընթացքում երեխաները կամա-ակամա սովորում են այն ամենը, ինչը ծրագրված և թաքնված է այդ առաջադրանքների հետևում:

Այսպես՝ խաղերը դասը միայն հետաքրքրաշարժ, զվարճալի ու բազմերանգ դարձնելու համար չեն, դրանք առաջին հերթին ուսանելի են և նոր գիտելիքներ են հաղորդում, սովորեցնում միտքը լարել, տրամաբանել: Խաղերը զարգացնում են երեխայի երևակայությունը, արագորեն լուծումներ գտնելու կարողությունը, համակցված մտածողությունը:

Ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց են համարվում նաև ***էլեկտրոնային խաղերը***: Դասվարի խաղային զինանոցը պարբերաբար պետք է նորացվի: Այս հարցում անփոխարինելի միջոց է էլեկտրոնային գրատախտակը: Էլեկտրոնային գրատախտակի հնարավորությունները թույլ են տալիս ստեղծել այնպիսի խաղ-խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է պատկեր տեղափոխել,տեղաշարժել, ավելացնել, պակասեցնել, չափել, մեծացնել, փոքրացնել, ձայն լսել և այլն:

Էլեկտրոնային ուսուցողական և զարգացնող խաղերը խթանում են մաթեմատիկայի, օտար և մայրենի լեզուների արդյունավետ յուրացմանը: Մեծ էկրանին խաղային միջավայր է ն երկայացվում, որը շատ դեպքերում հիշեցնում է մուլտֆիլմ: Սովորողը մտնում է խաղի մեջ, կատարում որոշակի գործողություններ՝ օգտագործելով իր գիտելիքները, կարողությունները: Այդ խաղային միջավայրը, որի տակ թաքնված է կոնկրետ ուսումնական խնդիր, թույլ է տալիս երեխային հեշտությամբ յուրացնել նյութը: Զանազան ձայնային, պատկերային էֆեկտները օգնում են այդ ամենին:
Որևէ հեքիաթի կամ բանաստեղծության ծանոթանալուց հետո երեխաները էլեկտրոնային գրատախտակի պատկերասրահից գտնում են թեմային համապատասխան նկարներ, հերոսներ և ինքնուրույն ստեղծում պատկերազարդ դրվագներ: Այդ նկարազարդ էջերը հետո օգնում են պատմելու հեքիաթի որևէ դրվագը կամ հեքիաթն ամբողջությամբ: Դրա հետ մեկտեղ, աննկատ սովորում են նաև օգտվել գրատախտակի գործիքներից, ծանոթանալ տարբեր ֆունկցիաների: Էլեկտրոնային խաղերը առավել հետաքրքիր և արդյունավետ են դարձնում նաև օտար լեզուների ուսուցումը: Սովորողները անհամբերությամբ են սպասում օտար լեզվի դասերին: Խաղ-առաջադրանքների օրինակներ են՝

- Ով ավելի շատ բառեր կկազմի տրված տառերով:
- Կատարիր գործողությունները և ստուգիր պատասխանը:
- Գուշակիր հանելուկները:

- Գտիր օրինաչափությունը և շարունակիր:
- Օգնիր մեղվին՝ նեկտար հավաքել:
- Մեկ կամ երկու փայտիկ տեղափոխիր և ստացիր համապատասխան պատկերը և այլն:

Նման խաղեր մինչ էլեկտրոնային գրատախտակ ունենալն էլ են եղել, սակայն երեխաներն այդպիսի աշխուժություն և պատրաստակամություն չեն ցուցաբերել: Օրինակ, երբ հանելուկ գուշակողը մոտենա գրատախտակին և էլեկտրոնային ռետինի օգնությամբ գտնի ճիշտ պատասխանի պատկերը, մեծ հրճվանք կարող է ապրել: Թվերի հետ տարբեր գործողություններ կատարելուց հետո կարելի է կիրառել ստուգման տարբեր միջոցներ: Մի դեպքում պատասխանը կարող է թաքնված լինել գունավոր փուչիկի տակ և պետք է ընդամենը պայթեցնել փուչիկը, մի ուրիշ դեպքում կարելի է փնտրել և գտնել կախարդական արկղում և այլն: Այս ամենն անշուշտ անհնար կլիներ իրականացնել առանց ժամանակակից էլեկտրոնային ուսուցման միջոցների:

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար դասվարի խնդիրը պետք է լինի տեղեկատվական տեխնոլոգիաների ամենօրյա օգտագործումը: Աշակերտները ինքնուրույն պետք է փնտրեն իրենց հարցերի պատասխանները, տեխնոլոգիաների միջոցով լուծեն հետաքրքրաշարժ խնդիրներ, նկարեն, բավարարեն իրենց ուսումնական հետաքրքրությունները օգտվելով տեղեկատվական տեխնոլոգիաների տված հնարավորություններից: Այս շարժառիթի կիրառումը հատկապես կարևոր և արդիական է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից պայմաններում:

Եզրակացություն

Այսպիսով՝

Ուսումնական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Կարևոր գործոն է շարժառիթը:

Ուսուցումը անհաջողության կմատնվի, եթե աշակերտը չունենա գիտելիքներ ձեռք բերելու շարժառիթներ: Աննպատակ՝ հենց միայն գիտելիք ձեռք բերելը ցանկալի չէ: Ունենալ այն, ինչը չգիտես ինչ ես անելու, կամ ինչի համար ես օգտագործելու՝ անհետաքրքիր է:

Ուրեմն՝ զարգացնող ուսուցման համար հարկավոր են շարժառիթներ: Դրանք են.

-հետաքրքրությունը ուսումնական նյութի նկատմամբ,

-գիտելիքների գնահատումը,

-գովասանքն ու խրախուսելը,

-խաղը,

-էլեկտրոնային խաղերը,

-SS-ների օգտագործումը և այլն:

Այս բոլորը ի վերջո ծառայում են անձի բարոյական, հոգեբանական, մասնագիտական որակների ձեռք բերմանը, օգնում են մարդուն կյանքում լինել նախաձեռնող, տեսնել կյանքի իրական պրոբլեմները, փնտրել դրանց լուծման արդյունավետ միջոցները՝ օգտագործելով տեխնոլոգիաները, մտածել, ինքնուրույն վերլուծել, կարողանում են ձեռք բերած գիտելիքները կիրառել առաջացած տարբեր պրոբլեմները լուծելիս, , ինչպես նաև դաստիարակել երջանիկ, ճկուն և ցանկացած իրավիճակում ճիշտ կողմնորոշվող և ճիշտ որոշումներ կայացնող քաղաքացիներ:

Գրականության ցանկ

Յուրի Ամիրջանյան - «Մանկավարժություն»

«Դպիր» ամսագիր-«Էլեկտրոնային խաղերը որպես ուսուցման արդյունավետ միջոց»

Բաղալյան Օնիկ- «ՈՒսում և մտավոր զարգացում»